ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2017թ. N-----Ա

ՈՐՈՇՈՒՄ

Լ. ԲԱՐԴԱԿՋՅԱՆԻՆ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՂ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական վճարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հոկտեմբերի 10-ի N 1293-Ն որոշման հավելվածի 2-րդ կետի 3-րդ ենթակետով և 3-րդ կետով, Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 10-ի N93-Ն որոշմամբ, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության 2017 թվականի մայիսի 10-ի h.17-3-11668 գրությամբ տրված համաձայնությունը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Թույլատրել քաղաքացի Լ. Բարդակջյանին սույն որոշման հավելվածում նշված տարածքում և սահմանված պայմաններով կազմակերպել ծառայողական ավտոկայանատեղ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Լ.ԲԱՐԴԱԿՋՅԱՆԻՆ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՂ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 10-ի «Երևանի քաղաքային համայնքի վարչական տարածքում ծառայողական ավտոկայանատեղերի կազմակերպման կարգը սահմանելու մասին» N 93-Ն որոշմամբ սահմանված է, որ Երևանի քաղաքային համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող ընդհանուր օգտագործման փողոցներում և հրապարակներում ծառայողական ավտոկայանատեղ կարող է կազմակերպվել ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կողմից Երևանի քաղաքապետին ուղղվող դիմումների հիման վրա՝ Երևան քաղաքի ավագանու որոշումներով: Միաժամանակ նշվում է, որ հայցվող ծառայողական ավտոկայանատեղերի հստակ տեղերը, սահմանները և ավտոկայանատեղում ավտոտրանսպորտային միջոցի կայանման ձևը նախապես ենթակա է համաձայնեցման Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության հետ:

11.05.2017թ. Լևոն Բարդակջյանը դիմել է Երևանի քաղաքապետին ք.Երևան Վ.Վաղարշյան փողոցի՝ հ.հ.12/9 և 12/5 հասցեներին հարակից ճանապարհահատվածի երթևեկելի մասի տեղային լայնացման հատվածում 3 /երեք/ ավտոմեքենայի համար ծառայողական ավտոկայանատեղ կազմակերպելու թույլատրման խնդրանքով՝ դիմումին կցելով Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 10-ի N 93-Ն որոշմամբ սահմանված անհրաժեշտ փաստաթղթերը:

ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության հետ համաձայնեցվել է ծառայողական ավտոկայանատեղի վայրը, որի վերաբերյալ առկա է նշված կառույցի 2017 թվականի մայիսի 10-ի հ.17-3-11668 գրությունը:

Ելնելով վերոգրյալ իրավական ակտի պահանջներից և սահմանված դրույթներից՝ նախապատրաստվել է Երևան քաղաքի ավագանու «Լ. Բարդակջյանին ծառայողական ավտոկայանատեղ կազմակերպելու իրավունք տալու մասին» որոշման նախագիծ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«Լ. ԲԱՐԴԱԿՋՅԱՆԻՆ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՂ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Լ. Բարդակջյանին ծառայողական ավտոկայանատեղ կազմակերպելու իրավունք տալու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«Լ. ԲԱՐԴԱԿՋՅԱՆԻՆ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՂ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Լ. Բարդակջյանին ծառայողական ավտոկայանատեղ կազմակերպելու իրավունք տալու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի 2017 թվականի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխությունների անհրաժեշտությունը բացակայում է:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հավելված
Երևան քաղաքի ավագանու 2017 թվականի
մայիսի 30-ի հ.——— -Ա որոշման

Քաղաքացի Լ.Բարդակջյանին ծառայողական ավտոկայանատեղ կազմակերպելու իրավունքի տրման պայմանները

Դիմող	Ծառայողական ավտոկայանատեղի տարածքի հասցե	Կայանատեղում «ավտոտեղ»-երի քանակ (տարածքի չափեր) և կայանման ձև	Կազմակերպչի կողմից վճարված տուրք	Այլ տրանսպորտային միջոցների կայանման սահմանափակում, աշխատանքային ռեժիմ
Քաղաքացի Լևոն Բարդակջյան (նույնականացման քարտ՝ 000214015, տրված 04.11.2012թ., 010 կողմից)	Վ.Վաղարշյան փողոցի՝ հ.հ.12/9 և 12/5 հասցեներին հարակից ճանապարհահատվածի երթևեկելի մասի տեղային լայնացման հատված	3 (22.5 գծմ), մեքենաների հաջորդական տեղաբաշխմամբ՝ մեկ շարքով	տարեկան	սահմանափակմամբ, աշխատանքային ռեժիմը՝ շաբաթվա բոլոր օրերին, ժ.08^{30}-23^{00}